

վասն առաջնոյն ըստ հանդիսադրութեան տեղոյն եւ ըստ հաստատութեան դաշնագրութեան, եւ վասն երկրորդին՝ ըստ նոյն դիտաւորութեան առնլի կիրս, եւ յաւէտ առ ի բժշկութիւն սրտից արանցն Արեւելից: Վերստին անդրէն հաստատեալ կացցեն ի նոյնութեան, որում ըզման սիրտք մեր լինել այսպէս, եւ համայնից իսկ յամենայնի: Իսկ դու յօժարեալ ըստ իս ուղղեսցես զմիտս քո առաւել ի տեղիս յայտասիկ հաստատութեամբ: Եւ հաւատամ յԱստուած զի շահ եւ օգնութիւն լինի մեծ յոյժ. (24):

Եղիազար պատասխանելով Յակոբ Զուղայեցիի այս գրութեան, կը յայտարարէ՝ թէ ինք հաւատարմութեամբ պահած է իր ուխտը եւ թէ առաւել եւս կը փափաքի համաձայնիլ սակայն չկարենալով Կ. Պոլիս երթալ, իր կարգին կ'առաջարկէ Յակոբ Կաթողիկոսին որ իրարու հետ տեսակցին Տիգրանակերտ, Կարին կամ էջմիածին (25): Սակայն առաջարկուած տեսակցութիւնը տեղի չ'ունենար:

Առժամեայ հաշտութիւն մը կը կնքուի նաեւ Եղիազարեան եւ Յակոբեան կուսակցութեանց միջեւ: Այս մասին, Յովհան Եպիսկոպոս Անդրիանուպոլսէն կը գրէ Հալէպ, Եղիազարին, 7 Հոկտեմբեր 1667ին. «...Մեծ զարմանք եւ սքանչելի իրս է յո-

(24) Դիւան Ս. Յակոբայ, Անդ, էջ 157-158:

(25) Անդ էջ 200-201

1941 4/02

11